ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ Տավուշի մարզպետարանը, որը գտնվում է ք.Իջևան N 1 հասցեում, ստորև ներկայացնում է N թիվ **ՏՄ-ԲԱՀՀԱՇՁԲ-15-10-2** ծածկագրով 2015թ-ի սեպտեմբերի 23-ին կնքված պայմանագրում 2015թ-ի նոյեմբերի 12-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով նախատեսված կանխավճարի ավելացում:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված կանխավճարի ավելացում: Կնքվել են համաձայնագրեր (կցվում է):

Կատարված փափախությունը չի բերել պայմանագրի գնի փոփոխության: 23.09.2015թ. կնքված ՀՏՄ-ԲԱՀՀԱՇՁԲ-15-10-2 ծածկագրով գնման պայմանագրի 8.4 կետը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա. Սարգսյանին

Հեռախոս՝ 094-01-59-40

Էլ. փոստ՝ ax1963@ramdler.ru

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝ չկան:

Պատվիրատու՝ ՀՀ Տավուշի մարզպետարան

Համաձայնագիր-2
23.09.15թ. կնքված N ՏՄ-ԲԸԱՀԱՇՁԲ -15-10-2 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Իջևան **«12» նոյեմբերի 2015թ.**

ՀՀ Տավուշի մարզպետարանը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս. Դավթյանի մի կողմից, և «Սահակյանշին» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Կապալառու», ի դեմս ընկերության տնօրեն Ս.Սահակյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 23.09.15թ. կնքված N ՏՄ-ԲԸԱՀԱՇՁԲ-15-10-2 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.4-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1. Փաստագրել 23.09.2015թ կնքված N ՏՄ-ԲԸԱՀԱՇՁԲ-15-10-2 N1 Հավելվածի՝ ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված, Հ-73 Մ-4-Պարզ լիճ հանրապետական նշանակության ավտոճանապարհի վերակառուցման և կամրջի կառուցման աշխատանքների կատարված և չկատարված աշխատանքների ծավալները, որի մասին կազմել սույն համաձայնագրի անբաժանելի մաս հանդիսացող փաստագրման ակտ՝ N1 հավելվածը:

1.1.2.Սույն համաձայնագրի N1 հավելվածով պայմանագրի մնացորդային գումարը՝ 200 500 176 (երկու հարյուր միլիոն հինգ հարյուր հազար հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ, Պատվիրատուն Կապալառուին է վճարում կանխավճարի ձևով, համաձայն Կապալառուի կողմից ներկայացված "Հայբիզնեսբանկ" ՓԲԸ-ի կողմից «12» նոյեմբերի 2015թ. տրամադրված թիվ 10463-02 Բանկային երաշխիքի:

Սույն կետի հիման վրա հատկացված կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա:

1.1.3. Պայմանագրի գումարի մնացած մասը՝ 46 715 800 (քառասունվեց միլիոն յոթ հարյուր տասնհինգ հազար ութ հարյուր) ՀՀ դրամը փոխանցվում է ՀՀ ֆինանսների նախարարության 900008030011 մրցութային հայտերի և պայմանագրերի կատարման ապահովման դեպոզիտային հաշվին, որը կվճարվի աշխատանքները կատարվելուց հետո Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

1.1.4. Կապալառուի կողմից Պայմանագրով ստանձվելիք պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, Պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի կողմից վճարում իրականացնելու մասին ծանուցումը ստանալու պահից 5 բանկային օրվա ընթացքում վերջինիս վճարել պահանջված գումարը՝ առանց պահանջելու Պայմանագրային պարտավորությունների խախտելու հիմնավորումը: Նշված ժամկետում վճարումը չիրականացնելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի անվիճելի և անառարկելի կարգով վճարման պահանջագրով գանձել համապատասխան գումար Կապալառուի ցանկացած թղթակից բանկում բացված՝ Կապալառուի ցանկացած այլ հաշվից:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է 23.09.2015թ կնքված N ՏՄ-ԲԸԱՀԱՇՁԲ-15-10-2 Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. 23.09.2015թ կնքված N ՏՄ-ԲԸԱՀԱՇՁԲ-15-10-2 պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Պատվիրատու Տավուշի մարզպետարան ք.Իջևան Սահմանադրության 1 Հ/Հ 900371051047 Իջևանի ՏԳԲ ՀՎՀՀ 07602031 Աշխատակազմի ղեկավար՝ Ս.Դավթյան (ստորագրություն)	**Կապալառու** «Սահակյանշին» ՓԲԸ ք.Երևան, Արարատյան-117/1 « Հայբիզնեսբանկ » ՓԲԸ Հ/Հ 1150000169370100 ՀՎՀՀ 02224769 «Սահակյանշին» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ս.Սահակյան (ստորագրություն)

Հավելված թիվ 1
<< 23 >> սեպտեմբերի 2015թ. կնքված աշխատանքների
կատարման թիվ <ՏՄ-ԲԸԱՀԱՇՁԲ -15-10-2> գնման պայմանագրի
<<12 >> նոյեմբերի 2015թ. թիվ 2 համաձայնագրի

ՓԱՍՏԱԳՐՄԱՆ-ԱԿՏ

ՀՀ Տավուշի մարզպետարանի և «Սահակյանշին» ՓԲԸ-ի միջև 23.09.15թ. կնքված N ՏՄ-ԲԸԱՀԱՇՁԲ-15-10-2 գնման պայմանագրի շրջանակներում 12.11.2015թ. դրությամբ փաստագրման արդյունքները հետևյալն են՝

1.«Սահակյանշին» ՓԲԸ-ին հատկացվել է 373,000,000 (երեք հարյուր յոթանասուներեք միլիոն) ՀՀ դրամ կանխավճար՝ բանկային երաշխիքի հիման վրա:

2.«Սահակյանշին» ՓԲԸ-ն իրականացրել է 524,356,188 (հինգ հարյուր քսանչորս միլիոն երեք հարյուր հիսունվեց հազար հարյուր ութսունութ) ՀՀ դրամի աշխատանքներ և ներկայացրել է հանձման-ընդունման արձանագրություններ:

3. Կանխավճարի տրամադրման և հանձման-ընդունման գործընթացի ապահովման արդյունքում՝ «Սահակյանշին» ՓԲԸ-ին վճարվել է 687,100,000 (վեց հարյուր ութսունյոթ միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ:

4. Կատարված աշխատանքների շրջանակում՝ Պատվիրատուի կողմից, կանխավճարից համամասնորեն մարվել է 210,256,188 (երկու հարյուր տասը միլիոն երկու հարյուր հիսունվեց հազար հարյուր ութսունութ) ՀՀ դրամ, մնացել է մարվի՝ 162,743,812 (հարյուր վաթսուներկու միլիոն յոթ հարյուր քառասուներեք հազար ութ հարյուր տասներկու) ՀՀ դրամը:

3. Չկատարված աշխատանքները կազմում են՝ 409 959 788 (չորս հարյուր ինը միլիոն ինը հարյուր հիսունինը հազար յոթ հարյուր ութսունութ) ՀՀ դրամ:

5. ՀՀ Տավուշի մարզպետարանի և <Սահակյանշին> ՓԲԸ-ի միջև կնքված 23.09.2015թ. N ՏՄ-ԲԸԱՀԱՇՁԲ-15-10-2 պայմանագրի մնացորդային գումարը կազմում է՝ 247,215,976 (երկու հարյուր քառասունյոթ միլիոն երկու հարյուր տասնհինգ հազար ինը հարյուր յոթանասուվեց) ՀՀ դրամ:

Պատվիրատու
Տավուշի մարզպետարան
ք.Իջևան Սահմանադրության 1
Հ/Հ 900371051047 Իջևանի ՏԳԲ
ՀՎՀՀ 07602031
Աշխատակազմի ղեկավար՝
Ա.Դավթյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Կապալառու
«Սահակյանշին» ՓԲԸ
ք.Երևան, Արարատյան-117/1
« Հայբիզնեսբանկ » ՓԲԸ
Հ/Հ 1150000169370100
ՀՎՀՀ 02224769
«Սահակյանշին» ՓԲԸ-ի տնօրեն՝
Ս.Սահակյան

(ստորագրություն)